Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

572
F-80

8

ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ

ՀԵՆՐԸԿԱ

ԶԱԽԻՐ ՄԱԶՕԽԻ, Թարգմանեց Գ. Ա.

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ, Թարգմանեցին Քոյրեր Ա.

ԾԷՄՔԻՆ

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ, Թարգմանեց օրիորդ Զ.

ԹԸՆԵՎ

1903

25 APR 2013

13031

ՀԵՆՐԻԿԱ

—

1845 թվի աշնանը՝ լեհական յեղափոխական կոմիտէի երկու գաղտնի պատուիրակները՝ Վիսնիովսկի և Դեմբովսկի մեկնեցին Պարիզից։ Նրանց յանձնարարուած էր ընդհանուր ապստամբութեան վերջին պատրաստութիւնները տեսնել, ապստամբութեան, որի համար տարիներից ի վեր աշխատում էին և որը լեհական բոլոր երկրներում տեղի պիտի ունենար միաժամանակ։ 1846 թվի փետրուարի 16ը նշանակուած էր որպէս ապստամբութեան օր։ Ռուսական Լեհաստանում շարժման գլուխն անցաւ խոշոր կալուածատէր Պոտոցկի. Պոզնանում այս կարևոր դերը վիճակուեց Մերոսլեուսկուն։

Երկու պատուիրակները գնացին դէպի Գալիցիա, անցնելով Կրակովից, որտեղ նրանք բանակցեցին դաւակիցների պարագլուխների հետ։ Այդ ժամանակները Կրակովը մի փոքրիկ անկախ հանրապետութիւն էր ներկայացնում, որ սպիտակ արծուի վերջին ապաստանն էր։

Վիսնիովսկին Կրակովից գիմեց Գալիցիայի արևելեան կողմը, մինչդեռ Դեմբովսկին մնաց արևմուտքում՝ Տարնովի, որտեղ էր ապստամբութեան գլխաւոր օջախը.

Հազար ու մի կերպ ծպտելով, երբեմն ոտքով գթութեան եղբայր կամ լեհաստանցի հրէայ, երբեմն էլ որպէս

սլավակ կամ թաթարագործ կամ ֆրանսիացի ժամագործ բանուոր՝ Դեմբովսկին կարում անցնում էր Բոխնեա, Ժեշով և Տարնով գաւառակները, որպէսզի խորհրդակցի այդ տեղերի շարժման պարագլուխների հետ։ Այդ պարագլուխներն էին երկու կոմս Վեսօլովսկիները, բարոն Բոգուշ և պ. Կոտարսկի։ Պիլնայում նա քաջալերում էր դաւադիրներին։ Գինետներում և տօնավաճառներում կոչ էր ուղղում գիւղացիներին և խոստանում էր նրանց վերացնել բօբօտը*) և աղի ու ծխախոտի հարկը։

Աւստրիական կառավարութիւնը անտեղեակ չէր Դեմբովսկու Գալիցիայում գտնուելուն և նրա գործերին։ Ոստիկանութիւնը անդադար հետամուտ էր լինում նրան, բայց Դեմբովսկին միշտ միջից էր գտնում խոյս տալու։

1845 թուի դեկտեմբերի սկզբներին Տարնովի կառավարութիւնը իմացաւ, որ Դեմբովսկին գտնւում է բարոնուհի Կիէլարովսկու գղեակում, որը քաղաքից հեռու չէր։ Անմիջապէս մի ոստիկան և հուսարների մի գումարտակ ուղարկուեց՝ նրան կալանաւորելու համար։

Դուբնոյում՝ բարոնուհու տանը՝ ընթրիքի էին նստել։ Տանտիրուհուց և Դեմբովսկուց զատ՝ այնտեղ էին գտնուում բարոն Բոգուշ և մի ջահել աղջիկ՝ օրիորդ Հենրիկա Լիստէվսկա, որի հայրը, մի լեհ սպայ՝ սպանուած էր Վոլայում, 1830 թուին։ Բարոնուհին պատսպարել և դաստիարակել էր Հենրիկային։ Նա բարձրահասակ, բարակ և գեղեցիկ օրիորդ էր, որ հռովմայեցի պատրիկ կնոջ վսեմ և հպարտ գլուխն ունէր։ Սկիւթուհու կապոյտ և անվեհեր աչքերով այս օրիորդը՝ երբեմն-երբեմն ակնյայտնի կարեկցութեան հայեացք էր գցում

*) Կօա, բեգար։

վայելչագեղ պատուիրակի վրայ, որի պարզ պերճախօսութիւնը նրան տարօրինակ յուզում էր պատճառել։

Յանկարծ Դուբնոյի հրէայ պանդոկապետը շտապով մտաւ սեղանատուն և, բոլորովին շփոթուած, յայտարարեց, որ ոստիկանը և հուսարները գիւղն են եկել։

— Շուտ, Դեմբովսկի, փախէք, շտապեցէք, աղաղակեց բարոնուհին։

— Փախուստը անհնարին է, ասաց հրէան, հուսարները պաշարել են գիւղը. նրանք բոլոր ելքերի մօտ պահակներ են դրել։ Մի քանի վայրկեանից այստեղ կ'լինեն։

— Այդ դէպքում այստեղ պէտք է թագցնել, ասաց Բոգուշը։

— Աւելորդ է, խօսեց Հենրիկան, որ մինչև այդ լռութիւն էր պահել. ինչպէս էլ լաւ թագցնէք, նրան կ'գտնեն։ Բայց եթէ պ. Դեմբովսկին համաձայնի իր անձը ինձ վստահել, աւելացրեց նա դէպի պատուիրակը դառնալով, ես յանձն եմ առնում նրան ողջ առողջ անցկացնել կայսերական զօրքերի միջով։

Դեմբովսկին մի վայրկենաչափ իր հայեացքը սևեռեց անվեհեր աղջկայ վրայ և պատասխանի փոխարէն լռիկ խոնարհուեց։

— Բայց նախ և առաջ, շարունակեց նա, պէտք է ձեր մօրուքը ամենայն խնամքով ածիլել։

— Այդ ես կը կատարեմ, գոչեց Բոգուշը. ինձ Գիգարոյի շնորհքն է տրուած։

Եւ մինչդեռ Բոգուշը ածիլում էր Դեմբովսկուն, Հենրիկան բարոնուհու հետ էր խօսում ձեռք առնելիք ուրիշ պատրաստութիւնների մասին։

Հրէան իսկոյն վերադարձաւ. նա գտաւ ոստիկանին և սպաներին արաղ կոնծելիս և առաջուց ու-

բախանալիս իրանց արշաւանքի աջող ելքի համար։

— Դուք, անշուշտ լեհ պատւիրակին փնտրելու էք գնում, որի համար ասում են թէ քահանայի տանն է թագնւել, փսփսաց խորամանկ պանդոկապետը ոստիկանի ականջին։

— Ինչպէս, բղաւեց վերջինը, միթէ նա արդէն իր թագուստը փոխե՞լ է։

— Է՛հ, ես ինչ գիտեմ, պատասխանեց հրէան մի անտարբեր եղանակով· այդ տեսակ բաների ես չեմ խառնւում, գլուխ չունեմ։

Այս խօսքերից յետոյ ոստիկանը անմիջապէս խորհրդակցեց սպաների հետ։ Վճռւեց՝ խուզարկութիւնը սկսել քահանայի տնից։

Շատ ճարպիկ կերպով թելադրւած այս խուզարկութիւնը միջոց տւեց Հենրիկային բաւական անվրդով կերպով իրագործելու իր ծրագրի առաջին մասը։ Երբ Դեմբովսկին լաւ ածիլւած էր, օրիորդը նրա երեսը ներկեց և գրիմ շինեց արւեստագէտի հմտութեամբ. ապա հագցրեց շրջազգեստ և մի մեծ մուշտակ, որ բարձունքին էր գործածում սահնակով զբօսնելու ժամանակ։ Վերջապէս, մազերին երկար ծամ կապեց և կապիւշոնով ծածկեց գլուխը։

Դեմբովսկին բոլորովին կերպարանափոխւած էր։ Միջահասակ և ճկուն, աղնիւ և նուրբ գիմագծերով ծըպտւած երիտասարդ դաւադիրը բաւական վեհ կերպարանք ունէր։ Ուղիղն ասած՝ նա սպասածից աւելի լաւ էր իր դերում, և երբ Հենրիկան, նմանապէս մուշտակի մէջ փաթաթւած, նրանց սպասող սահնակը մտաւ, տեսնողը կ'երդւէր, որ սահնակը երկու գեղեցիկ լեհուհիներին է տանում։

Բագի դուռը լայն բաց արին, կօզակը շաչեց մտրակը, և սահնակը սլացաւ գիւղամիջի արքայական ճանապարհով։

Նոյն րոպէին, երբ սահնակը պիտի անցնէր պատնէշը, ուր սովորաբար գտնւում էր մաքսատան պահնորդը, „Կանգ ա՛ռ, ո՞վ ես“ գոչը մեխեց իր տեղում կառապանին։ Մի սպայ, երկու հուսարի ուղեկցութեամբ, որոնք լցրած զարաբինաներ ունէին, մօտեցաւ սահնակին։

— Այս ի՞նչ է նշանակում, հարցրեց Հենրիկան, երեսի քօղը բարձրացնելով և մի զայրացած դէմք ընդունելով, որ նրան լաւ աջողւեց։ Չ'լինի՞ թէ մենք պատերազմական կամ յեղափոխական դրութեան մէջ ենք։

Շլացած այս գեղեցիկ կնոջ գոռոզ հրապոյրով սպան քաղաքավարութեամբ ձեռքը գլխարկին տարաւ։

— Մենք պատերազմում ենք միայն տղամարդկանց հետ և ոչ թէ կանանց, մանաւանդ երբ նրանք այնպէս գեղեցիկ են։

Հենրիկան իր շնորհակալութիւնը յայտնեց մի քաղցր ժպիտով։ Սպայի արած նշանին՝ կառապանը մտրակեց ձիերին և սլացաւ՝ տանելով լեհ գաղթականութեան ամենավտանգաւոր պատւիրակին։

Ոստիկանը՝ ի հարկէ Դեմբովսկուն քահանայի տանը չ'գտաւ· նոյնպէս զուր տեղը փնտրեց նրան բարձունքում գղեակում։

Հենրիկան առաջնորդել էր երիտասարդ դաւադրին իշխան Զարտորիսկու գղեակը, որ գտնւում էր Տարնոֆի շրջակայքում։ Նա շատ լաւ գիտէր, որ ոչ ոք չէր գնայ այնտեղ նրան փնտրելու, որովհետև ամենքը գիտէին, որ իշխանը կառավարութեանն էր յարել և որ

նրա կառավարիչն էր միայն յեղափոխականների հետ յարաբերութիւն պահպանողը։

Հազիւ էր Դեմբովսկին իր կանացի զգեստները փոխել իշխանական կօղակի հագուստի, երբ խնդրեց Հենրիկային մի փոքրիկ ունկնդրութիւն շնորհել իրան։ Հենրիկան ժպիտը երեսին համաձայնեց։

Հէնց որ նրանք մենակ մնացին դահլիճում, Դեմբովսկին մի խանդակաթ ոգևորութեամբ բացականչեց.

— Հենրիկա, դուք իմ կեանքը փրկեցիք, առաւել քան կեանքը, որովհետև ձեր անձնուիրութեան շնորհիւ է, որ ես կարող եմ իմ նպատակն իրագործել։ Սակայն համարձակւում եմ էլի մի բան խնդրել ձեզանից։ Այս կարճ ժամանակում ես ձեզ ճանաչեցի և սիրեցի։ Համաձա՞յն էք իմը լինել յաւիտեան։

Հենրիկան մի վայրկեան նրան նայեց, յետոյ սրտաբուխ եռանդով ձեռքերը նրան մեկնեց.

— Այո՛, ասաց նա, հէնց որ Լեհաստանը փրկուեց, ազատ՝ ես ձերը կ'լինիմ։

Դեմբովսկին նրա ոտքն ընկաւ, և Հենրիկան գրկելով նրա գլուխը՝ ճակատին դրոշմեց մի անբիծ համբոյր։

—

Այդ օրից ի վեր սիրող և քաջ օրիորդը Դեմբովսկու հաւատարիմ ընկերուհին դարձաւ բոլոր այն արկածալի արշաւանքների մէջ, որ նա ձեռնարկեց ձմեռուայ ամենախիստ միջոցին՝ Կարպատեան լեռներում, Վեդովնցի գաւառակում Կրակով վերադառնալու նպատակով։

Տղամարդու զգեստներ հագած՝ նա Դեմբովսկու հետ մագլցում էր ամենաբարձր սարերի վրայ, անցնում էր ձիւնով լցած հեղեղատները, գիշերում էր գիւղական խրը-

ճիթներում կամ հրէական գինետների մէջ և յաճախ՝ միշտ նրա հետ՝ երկար ճանապարհներ էր կտրում ձիով՝ գիշեր ժամանակ և ամենախիստ սառնամանիքին։ Քանի գնում՝ նա աւելի էր սիրում Դեմբովսկուն և նայում էր նրան, իբրև իր դժբաղդ հայրենիքի ազատարարին, վերակենդանացած լեհական հանրապետութեան ապագայ դիկտատորին և փափագ ունէր՝ նրա հետ յաղթել, նրա հետ մեռնել։

Անհամար տանջանքներից և վտանգներից յետոյ, նրանք վերջապէս փետրուարի 10 ին Կրակով հասան։ Հենրիկան սրտաբաց ընդունելութիւն գտաւ ծերուկ կոմս Վեձիցկու տանը։ Եագելօնների հին քաղաքում վխտում էին փախստականները. ամեն բան կարծես պատրաստ էր կռուի համար։ Մնում է միայն, ասում էին Դեմբովսկուն, որոշ քանակութեամբ զէնք ներմուծել։ Այդ սպասւում էր Գալիցիայից։ Դժբախտաբար ոստիկանները անդուլ կերպով հսկում էին Պօտգուժէի կամուրջի շուրջը։

Այս իմանալով՝ Հենրիկան յանձն առաւ մի յանդուգն քայլ անել։ Յաջողելու համար՝ նա ոչ միայն իր քաջութեան վրայ էր յոյս դնում, այլև իր բնածին նազանքի և կանացի չարաճճիութեան վրայ։ Օրիորդը իր ծրագիրը ներկայացրեց Դեմբովսկուն, որը իր լիակատար հաւանութիւնը տուեց և այս անգամ ուղում էր նրա պատուէրներով միայն ղեկավարուել։

Պօտգուժէի ոստիկանը շատ զարճամոլ էր, քէֆ և կանայք սիրող։ Հենրիկան Կրակովում կառք նստեց և ուղղեց նրա մօտ գնաց՝ տեղեկութիւններ առնելու պատրուակով։ Նա ուղում իր իմանալ՝ արդեօք հնարաւո՞ր է մի երիտասարդ կնոջ համար, որ զարհուրած է յեղա-

փոխտական սպառնալիքներից, Լիմբերգ գնալ արևմտեան Գալիցիայի վրայով։ Պէտք է նկատել՝ որ այդ ժամանակները դեռ ճեպակառքերով էին ճամբորդում այն կողմերում.

Ոստիկանը աչքերով լափում էր ջահել կնոջը, որը ջանք չէր խնայել, որքան կարելի է՝ հրապուրիչ պաճուճանքներով նրան ներկայանալու։ Նա իր պարտականութիւնը համարեց Հենրիկային յետ կանգնեցնել այդ ճանապարհորդութիւնից։

— Շատ ցաւալի է, ասաց Հենրիկան կեղծ դժգոհութեան հառաչով, ես օտար եմ և ոչ ոքի չեմ ճանաչում այս երկրում, եթէ ստիպուած լինեմ Կրակով մնալ, ձանձրոյթից կ'մեռնեմ։

— Այդ դէպքում Պօտգուժէ եկէք, տիկին, վրայ բերեց ոստիկանը, Հենրիկայի փոքրիկ ձեռքը բռնելով։

— Բայց այնտեղ էլ ինձ ոչ ոք չէ ճանաչում։

— Եթէ բարեհաճէք ինձ թոյլ տալ ձեր ձանձրոյթը փարատել, պատասխանեց կնասէր ոստիկանը մի ժպիտով, որ նոյնքան սիրալիր էր, որքան և արտայայտիչ, ես ինձ շատ երջանիկ կ'համարեմ մի այդպիսի կախարդիչ տիկնոջ ասպետը լինելով։

— Ասուած իմ, մեծ ուրախութեամբ։ Ես ձեզ շատ երախտապարտ կ'լինէի, եթէ նեղութիւն կրէիք փոքր ինչ ինձանով զբաղուել մրմնջաց Հենրիկան՝ ուղղելով նրան մի հայեացք՝ լի խոստումներով։

Անմիջապէս պայմանաւորուեցին, որ Հենրիկան հէնց նոյն երեկոյին կ'տեղաւորուի Պօտգուժէի հիւրանոցներից մէկում։ Նա վերադարձաւ իր ճանապարհորդական արկղներով և մի աղախնի ընկերակցութեամբ, և երկու սենեակ վարձեց ընտրած հիւրանոցում։

Նոյն երեկոյին, մինչդեռ Հենրիկան ընթրում էր ոստիկանի հետ, Դեմբովսկին՝ ծպտուած իբր լեհաստանցի հրէայ՝ Կրակովից Պօտգուժէ եկաւ և կանգնեց ոստիկանատան պահականոցի առջև՝ խնդրելով, որ թոյլ տրուի իրան ցոյց տալ իր անցագիրը տասնապետին։

— Անիծուած ջհուդ, փնթփնթաց վերջինը, ի՞նչ ես մեզ անհանգստացնում այսպիսի ժամանակ։

— Եթէ ես ձեր հանգիստը վրդովեցի այս ցուրտ եղանակին, պարոն տասնապետ, խոնարհաբար պատասխանեց Դեմբովսկին, ապա ուրեմն կ'խնդրէի այս կաղ-դուրիչ խմիչքը ընդունել, որով ինձ երջանկացրած կ'լինէիք և որը, կարծում եմ, խկոյն մոռացնել կ'տայ այն տհաճութիւնը, որ ձեզ պատճառեցի։

Նա իր սահնակից հանեց մի շիշ օղի և առատօրէն բաժանեց տասնապետին և նրա զինուորներին։ Եւ հազիւ էր հեռացել նա, որ բոլորը խմիչացնում էին պահանոցում։ Կամրջի մուտքին կանգնած պահնորդը՝ իր բաժինը ստացած լինելով, հրացանը ձեռքին՝ գետնի վրայ նստած՝ քնել էր մի սիւնի տակ։ Քառորդ ժամ չ'անցած՝ վեց մեծ սահնակներ ծանրաբեռնուած ղէնքերով և ռազմամթերքով առանց որևէ արգելքի, անցան կամուրջը։ Իսկ Հենրիկան նոյն գիշերը վերադարձաւ Կրակով։

Վերջապէս յեղափոխութիւնը պայթելու վրայ էր, բայց վերջին րոպէին դաւադիրների ծրագիրը անակնկալ դժուարութիւնների հանդիպեց։ Աւստրիական կառավարութիւնը շարժում նկատելով Կրակովում, ուղարկեց մի վաշտ, զօրապետ Գոլէնի հրամանատարութեամբ։ Նա տիրեց քաղաքին՝ ականջ չկախելով ծերակոյտի բողոքներին, և ձիաւոր պահնորդներ կանգնեցրեց բոլոր շրջակայ գիւղերում։

Բայց և այնպէս դաւադիրների պարագլուխները պատերազմական խորհուրդ գումարեցին պ. Վեձիցկու մօտ, և այստեղ Դեմբովսկու ծրագիրն էր, որ յաղթանակ տարաւ։ Որոշուեց՝ անմիջապէս գումարել շրջակայքի բոլոր ապստամբ խմբերը, կալանաւորել մի գիշերուայ մէջ բոլոր ձիաւոր պահնորդներին և հետևեալ օրն իսկ յարձակման ենթարկել զօրապետ Գոլէնի դիրքը Կրակովում։

Անմիջապէս դերերը բաժանեցին։ Դեմբովսկուն պատուիրեցին յանկարծակի յարձակուել Կրեսովիցէի թեթևազէն ձիաւորների ջոկատների վրայ։ Նա գնաց Հենրիկայի հետ։ Տեղ հասնելուն պէս՝ դաւադիրը գտաւ հարևան գիւղերի կալածատէրերին, ինչպէս և մի գունդ լաւ զինուած հեծելազօրք։

Օգտուելով գիշերուայ մութից և աւստրիացիների անհոգութիւնից, նրանք կատարելապէս աջողեցրին յարձակումը։ Ձիաւորների կէսը սպանուեց, մնացածը գերի ընկաւ։ Միայն նրանց հրամանատար՝ Լէյտենանտ Բերնտ, որ թէև հրազէնի երկու հարուածով վիրաւորուած էր, կարողացաւ ցատկել իր ձիու վրայ և Կրակով տանող մեծ ճանապարհը ձգել իրան։ Բերնտ պիտի անցնէր ապըստամբների միջով, եթէ նրան աջողուէր փախուստ տալ, լուրը զօրապետին տանել և բերդապահ զօրքը ոտքի կանգնեցնել, ծրագիրը հաւանականաբար չէր աջողուի և Դեմբովսկին տանուլ կը տար։

Վայրկենական վճռողականութեամբ Հենրիկան խթեց իր ձին և սրընթաց արշաւեց կայսերական սպայի ետեւից։ Այս կատաղի հալածանքի մէջ աջողութեան հաւանականութիւնը երկուսի համար էլ հաւասար էր, որովհետև, թէև Բերնտը ահագին տարածութիւն էր անցել,

բայց վիրաւորուած էր, մինչդեռ Հենրիկան իր ժիր ձիու շնորհիւ՝ գործելու բոլոր միջոցները իր տրամադրութեան տակ ունէր։

Յիրաւի. անվեհեր օրիորդը արդէն հակառակորդին հասնելու վրայ էր, երբ վերջինը հանդիպեց մի պատնէշի, որ կտրեց նրա ճանապարհը։ Հեռուից Հենրիկան առաջարկեց նրան՝ անձնատուր լինել. Բերնտ մի վայրկեան տագնապի մէջ էր. նա իրան կորած էր համարում։ Այն ժամանակ իր վերջին ճիգը թափելով՝ յետ ու առաջ գնաց, ուժգին խթեց և առաջ թռցրեց իր ձին. քաջ կենդանին, թէև սաստիկ յոգնած՝ պատնէշը անցաւ։ Հենրիկան ի զուր աշխատեց,—նրա երիվարը հրաժարուեց նոյն խաղից։ Կատաղած՝ ձիաւոր օրիորդը ատրճանակ արձակեց սպայի վրայ, բայց չը դիպաւ։ Եւ նա կարողացաւ հասնել Կրակով և զօրապետ Գոլէնին հաղորդել եղելութիւնը։

Սրանից յետոյ այլևս անկարելի էր տիրել քաղաքին անակնկալ յարձակումով։ Պէտք էր յետաձգել ձեռնարկը անորոշ ժամանակով, կամ թէ առանց ուշանալու՝ մի կանոնաւոր յարձակումով բաղդ փորձել։ Վերջին վճռի վրայ կանգ առան։

Հետեւեալ օրը, մինչդեռ ապստամբները բոլոր կողմերից միաժամանակ առաջ էին գնում դէպի Եագելլոնների քաղաքը, կրակովցիները զէնք էին վերցնում։ Ամբողջ օրը կռուեցին փողոցներում և քաղաքի շրջակայքում։ Միայն երեկոյեան դէմ պայմանաւորուեցին զինադադար անել։ Զօրապետ Գոլէնն գտնելով, որ դիրքը պաշտպանելի չէ, գիշերով թողեց քաղաքը և իր գնդերի հետ քաշուեց Պոտգուժէի կամրջի ետևը, այնտեղից էլ՝ Վէտովիցէ։

Մինչ այս մինչ այն, փոխ-գնդապետ Բենեդեկ Բոխնեա էր գնացել և այնտեղ գտնուող գնդերը իր հրամանի տակ առել։ Շրջակայքի գիւղացիները ատելութեամբ լի դէպի իրանց տէրերը, զէնք էին վերցրել ապստամբների դէմ։ Բենեդեկ նրանցից մի քանի հազար հաւաքեց իր շուրջը, խրախոյս կարդաց նրանց և գոնէ զինուորական պատիւը փրկելու համար՝ վճռեց իր թոյլ ոյժերով դէմ դնել լեհերին, որոնց գալուն սպասում էր։

Կրակովում լաւ կազմակերպելուց յետոյ, ապստամբների փոքրիկ զօրքը զէնքերի և ռազմամթերքի մեծ պաշարով առաջ գնաց և մտաւ Գալիցիա։ Բենեդեկ դուրս եկաւ նրա առաջ և Գտով գիւղի մօտ մի արիւնահեղ կռիւ տեղի ունեցաւ, որին մասնակցեց Հենրիկան՝ Դեմբովսկու կողքին։ Գեղեցիկ օրիորդը՝ ալեծածան երկար շրջազգեստով և բրանդենբուրգեան ժակէտ հագած, գլխին կարմիր կօնֆեդերատկա,* ձեռքին՝ սուր, յեշեցնում էր լեհական այն թագուհուն, որ օգնեց Եագելլօնին այնքան յաղթանակներ տանելու տեւտոն ասպետների դէմ։ Նա յիշեցնում էր նմանապէս դաշնակցութեան ժամանակի անվեհեր ամազօնուհիներին և 1831 թւի ապստամբութեան կռիւները։

Բայց Հենրիկայի ամբողջ հերոսութիւնը՝ միացած Դեմբովսկու զինուորական տաղանդին՝ անկարող էր ճակատագրից խուսափել։ Լեհերը բոլորովին յաղթուած, խառնաշփոթ փախստի մատնուած, անկարգ կերպով յետ նահանջեցին դէպի Պօտգուժէ։ Հազարից աւելի ապստամբ ընկաւ կռուի դաշտում։ Լեհ գիւղացու գերանդին սարսափելի հունձ էր կատարել։

* Լեհական ազգային փետրաւոր գլխարկ, քառանկիւնի։

Բենեդեկ յաղթանակը առաջ տարաւ իր ամբողջ եռանդով, որ նրան ապագայում այնքա՜ն դափնիներ բերեց Իտալիայի և Հունգարիայի կռուի դաշտերում։ Իր տրամադրութեան տակ ունեցած փոքրիկ զօրքով և իրան միացած գիւղացիների մի քանի խմբերով՝ նա կատաղութեամբ հետամուտ եղաւ փախչողներին և նրանց հետ գրեթէ միաժամանակ հասաւ Պօտգուժէ։

Դեմբովսկին այն կարծիքի էր, որ պէտք է միանգամ էլ կռիւ սկսել, բայց միւս պարագլուխները վճռեցին. նրանք մեկը միւսի ետևից անյայտացան և քիչ ժամանակից Դեմբովսկին մենակ մնաց քահանայի տունը, որտեղ գումարուել էր պատերազմական խորհուրդը։ Ահա այդտեղ բոլորովին յուսահատ, նա ընկաւ մի աթոռի վրայ։ Թուլութեան և վհատութեան այդ րոպէին՝ երիտասարդը զգաց, որ մի փոքրիկ, բայց կորովի ձեռք իր ուսին յենուեց։ Նա ծանր կերպով գլուխը բարձրացրեց և տեսաւ Հենրիկա Լիսանէվսկուն իր առջև կանգնած։

— Դէ՛հ, սիրտ առ, բարեկամս, և մանաւանդ փոքր ինչ սառնասրտութիւն ունեցիր։ Մինթէ մեզ այլևս անելու ոչինչ չէ մնում։

— Մեզ մնում է միայն պատուով մեռնել, պատասխանեց Դեմբովսկին դառն ժպիտով։

— Լա՛ւ, թող այդպէս լինի։ կը մեռնենք միասին։

—

Աւստրիացիները յարձակմամբ վերցրին Պօտգուժէն. Մնացած ապստամբները, դիմադրելու անօգուտ փորձ անելուց յետոյ, խառնաշփոթ կերպով փախան դէպի Կրակով։

Սակայն մի փոքրիկ խումբ, կռնակը եկեղեցուն տուած, յամառում էր Թշնամուն դէմ դնելու։ Խմբի գլուխն էր անցել մի երիտասարդ՝ լեհական համազգեստով, թուրը ձեռին, իսկ նրա կողքին մի օրիորդ՝ լեհական դրօշակն էր պարզել իբրև կուռի վերջին հրաւէր Թշնամուն։ Խումբը տեսնելով, որ աւստրիական մի զօրագունդ առաջանում է դէպի իրան, կրակ արաւ, բայց Թշնամու գնդակների միահամուռ տարափը բաւական եղաւ այս հերոսների մեծագոյն մասը գետին գլորելու։ Ողջ մնացածները սկսեցին փախչել։

Սպանուածների մէջ գտան փոքրիկ վաշտի հրամանատարին, դրօշակակիր օրիորդին և բազմաթիւ քահանաներ։

Նոյն ժամին Կրակովը անձնատուր էր լինում, իսկ աւստրիացիները, ռուսները և պրուսացիները ընդհանուր համաձայնութեամբ գրաւում էին քաղաքը։

Մի ժամանակ լուր տարածուեց, իբր Թէ Դեմբովսկին փախել ազատուել էր. բայց երբէք, այդ օրից ի վեր, նրա մասին խօսող չ'եղաւ։ Աւելի ուշ, կենդանի մնացածներից մէկը ինձ պատմեց Պրագայում, պանսլաւիստների համագումարին, որ Դեմբովսկին սպանուել էր Պօտգուժէի եկեղեցու առջև և նրա հետ միասին չեն-ըրկա Լիստէվսկան՝ լեհական դրօշակը ձեռքին։

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Երբ Բօսնիայի և Հերցեգովինայի խռովութիւնները փոխուեցին ընդհանուր ապստամբութեան, որից շուտով մեծ պատերազմ ծագեց, աւստրիական բազմաթիւ սպաներ, սլաւոն ցեղից, շտապեցին Աւստրիայից գնալ Սերբիա՝ օգնութիւն հասցնելու վտանգի ենթակայ եղբայրներին։

Ռազմական տենդը ինձ ևս բռնեց։ Դա շատ բնական էր։ Միայն Թէ դեռ մինչև այսօր էլ ես ինձ հարց եմ տալիս,—ի՞նչպէս եղաւ, որ ուղղղ Սերբիա դիմելու փոխարէն՝ Մոնտենեգրո գնացի և ինքս ինձ հօսպօդար Նիկոլայի տրամադրութեան տակ դնելու ցնորամիտ գաղափարն ունեցայ։

Գուցէ դա արդիւնք էր այն տպաւորութեան, որ իշխանը թողել էր ինձ վրայ, երբ մի քանի ժամանակ առաջ ես նրան հանդիպեցի Վիեննայի համաշխարհային ցուցահանդէսում։ Իշխանը իր կտրիճ հետեւորդներով իմ մէջ հիացմունք էր զարթեցրել և այդ տպաւորութիւնը դեռ չէր անհետացել։ Գուցէ դա ցերմակի պատկերի մի յիշողութիւն էր, որ աչքիս էր զարնուել Վիեննայի գեղարուեստագէտների ընկերութեան մէջ։ Այդ նկարը պատկերացնում էր սև լեռնցի կանանց, որոնց գերի էին տանում բաշիբոզուկները։ Գուցէ իմ ռազմական տրամադրութիւնների մէջ մաս ունէր այն հրապոյրը, որ ես գտել էի այդ կանանց սևորակ աչքերում։ Այսպէս Թէ այնպէս՝ մի առաւօտ ես դէն գցեցի իմ սև-դեղին գօտին և մի քանի օր անցած՝ ներկայացայ իշխան Նիկոլային՝ Ցետինիէում։

3899-48

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ

Ես շուտով նկատեցի, որ Մոնտենեգրոյի համար ուներեցած իմ եղբայրական անձնվիրութիւնը փոքր ինչ նեղում էր այդ ասպետ-բանաստեղծին։

Նա ինձ ընդունեց շատ սիրալիր կերպով, բայց ես ինչ ծառայութիւն կարող էի մատուցանել նրան, քանի որ զինուորներից բաղկացած զօրաբանակ չը կար։ Այժմ սերբերն էլ ֆրանսիացիների, գերմանացիների և անգլեցիների նման են պատերազմում։ Նրանց ես, ինչպէս այդ ազգերին, անհրաժեշտ է իմանալ կռիւ մղել բաց դաշտում և անհնարին է այլ ես զանց առնել զինուորական կարգապահութիւնը։ Մինչդեռ Մոնտենեգրոն սլաւոնական Տիրոլն է, 1809 թւի Տիրոլը. զօրապետները, ինչպէս և հասարակ զինուորները, ժողովրդի միջից են դուրս գալիս, և լեռնցիներին յատուկ կուսելու եղանակը պէտք չունի օտար սպաների ղեկավարութեան։ Բայց և այնպէս, ինձ տուին Թիկնապահի պաշտօն մի սոսկալի վոյէվոդի, իշխան Կարադիչի մօտ, և ես հրաման ստացայ նրա մօտ տեղափոխուելու։

Ամեն մարդ շտապում էր ճանապարհի պատրաստութիւնները տեսնել։ Դա մի անվերջ գնալ-գալ էր, այնպէս որ, չը նայած սլաւոնների հիւրասիրութեանը, ես շատ սակաւ էի տեսնում իմ տանտիրոջ և նրա ընտանիքը։ Օրւայ մեծ մասը անց էի կացնում շրջակայքի հեղեղատներում՝ շրջելով և դարան մտնելով՝ աղէսներ ու կզաքիսներ որսալու համար։ Առաջին անգամ, երբ լեռներում, մի քարի վրայ նստած՝ դիտում էի հեռաւոր հորիզոնը, հասկանալի եղաւ ինձ՝ թէ ինչո՞ւ էին այդ երկրին տուել տարօրինակ Զերնագորա անունը։ Դրանք իսկապէս սև լեռներ են, որ կազմում են նրա նեղ սահմանները։ Մարդկային հայեացքը շրջում է

հեռաստանում կրային մուգ-մոխրագոյն լեռների վրայ, որոնք զուրկ են անտառներից և լերկ, ակօսուած խոր ճեղքերով։ Դա քարացած հսկայանման ալիքների մի ովկիանոս է, որի լռութիւնը սարսափ է ազդում։ Ոսկեղօծ հորիզոնի միւս կողմում իսկական ծովն է, ուր փոքրիկ առագաստները և արևի շողերը պար են բռնում, ուր կոհակների կապոյտը նմանում է Աստուածամոր աստեղազարդ քողին։

Ամբողջ երկիրը, կարծես, մի ահագին բերդ լինի, իսկ ամեն մի տուն՝ ամուր պահականոց։ Լեռների վրայ ձգուում են շաւիղներ, որպէս գալարուող ահարկու օձեր, որոնք, կարծես, ներքևում են արևի կիզիչ ճառագայթների տակ։

Ի՞նչ վայրենի մելամաղձութիւն։

Այս վսեմ առանձնութիւնը՝ հեռու փչացած, ուժասպառ մեծատունների աշխարհից՝ ինչպէս և մշտնջենական պայքարը բնութեան տարերքների հետ, ընտրում են բնականաբար ուժեղ բնաւորութիւններ և անվեհեր սրտեր։

Ահա այդպէս պակերացաւ ինձ առաջին անգամ վոյէվոդան, երբ ես նստեցի նրա կողքին, համեստ տնակի առջև, իրիկնադէմի անորոշ ու աղօտ լոյսին։

Ամեն ինչ հուժկու էր այդ մռայլ ու անխոս կարգիչի մէջ, — իրանը, անդամները, քիթը, աչքերը, ձեռքերը,—և այդ բոլորը միաժամանակ ներկայացնում էր կատարեալ ներդաշնակութիւն։

Իշխանը իր պղնձագոյն դէմքով և հրաշալի կազմուածքով նման էր մի հերոսի արձանի, որ գերազանցում է բնական մեծութիւնը։ Երևի այդպէս էին հռոմէական կոնսուլները և սլաւոն վեհապետները, ինչպէդ

Կինկինատոս, Պրժեմիսլ և Պիաստ, որոնց գնում ու գտնում էին վար անելիս և այնտեղից գահ բարձրացնում:

Նրա կինը՝ Մելիցան իմ դիմաց երևում էր մեծ ու հաստ, իսկ իր ամուսնու կողքին՝ նա նոյնքան նուրբ ու ճկուն էր, ոլքան և նազելի: Նրա խոշոր դիմագծերը խրոխտ արտայայտութիւն էին տալիս քթին ու բերանին, բայց դրա փոխարէն նրա սև աչքերը այնքան հեզ էին և բարի: Առանց այդ հեզութեան ու ժպիտի, որ լուսնեակ գիշերի համեստ շքեղութիւնն ունէին, կ'ասէիր թէ հպարտ Մելիցայի ուսերի վրայ Յունոն Լիւգովիզլի գլուխն է դրուած:

Տան մէջ այդ հրաշալի կինը շրջում էր, որպէս իր ամուսնու ստուերը: Կարծես աղախին կամ ստրուկ լինէր:

Մի երեկոյ, երբ աստղերը արդէն վառուում էին լայնածաւալ երկնակամարի վրայ, որի ֆոնը նոյնքան սև էր, ոլքան և սարերը, Մելիցան հրամեցրեց մեզ մի-մի բաժակ սուրճ և տաճկական չիբուխ: Նա վառեց նրանցից մէկը և առաջարկեց իշխանին, յետոյ ծնկի եկաւ՝ նրա ոտնամանները հանելու համար և մեկնեց նրան մի զոյգ հողաթափ: Նա կամենում էր ինձ էլ նոյն ծառայութիւնը մատուցանել, պատճառաբանելով, որ ես իր ամուսնու հիւրն եմ, բայց ես հրաժարուեցի՝ ոչ առանց շփոթութեան և կարծեմ մի քիչ էլ կարմրեցի:

Կարադիչը շարժեց իր առիւծի գլուխը:

— Դու սխալւում ես, դիմեց նա ինձ, դուք երես էք տալիս ձեր կանանց. ահա թէ ինչու նրանք այնպէս չար են: Իմ վիզը երբէք լուծ չի կրել, նոյն իսկ կնոջ լուծ:

Տիրեց լռութիւն: Նոյն րոպէին մօտեցաւ մի կոյր աշուղ: Նստելով իր տխրահնչուն գուսլան, նա ձայնեց Ագար-բէկի մահուան դիւցազնական երգը, ապա

մի ուրիշը, որ շանթահարեց մեր զգաստ ոգիները.

Սէրը կրակ է՝ կանթեղ լուսաշող,
Որ առկայծում է մեր կրծքի խորքում:
Ով չի ճանաչում նրա լոյսն ու շող,
Անիծեալ լինի իր ամբողջ կեանքում:

Բայց քէնը լափող հուր է վառվռուն,
Երբ կպչում է նրան մի փոքրիկ պատրոյգ,
Նա տիրանում է սրտին ու հոգուն,
Բոցավառւում է, որպէս մի խարոյկ:

Զգուշացիր նրանից, ով որ չի ատում,
Իմացիր, որ նա չի ճանաչում սէր.
Դա մոլար հուր է հեռուից փայլփլում,
Անզօր ձգելու մի թեթեւ ստուեր:

Մելիցան և ես միաժամանակ նայում էինք Կարադիչին: „Այդ մարդը ատել գիտէ,“ մտածում էի ինքս ինձ, իսկ Մելիցան կարծես աւելացնում էր. „Բայց նոյնպէս և սիրել“:

Յանկարծ Կարադիչ առաւ գուսլան և սկսեց նուագել ու երգել.

Հիւանդութիւնից մեռնել չեմ ուզում՝
Մահճի մէջ ընկած անզօր, դալկահար.
Կ'ուզէի մեռնել գոռ մարտի դաշտում,
Վանելով սոսին իմ ամենահար:

Մեռնել կ'ուզէի, ինչպէս վառ արփին,
Որ լեռան ետեւ մեղմիկ ժպտալով,
Ոսկի շողերը է նետում աշխարհին,
Նրան իր վերջին հրաժեշտը տալով:

Եւ կամ գուսլայի ձայնին ունկնդիր՝
Կ'ուզէի մեռնել երբ լարն է կտրում,

Հեծում է վերջին բեկբեկող թրթիռ,
Եւ լռում խիզախ մի երգ անդորրում։

Մելիցան նստած էր դէմքը ձեռքերին կրթնած, հայեացքը գետնին յառած, միշդեռ նրա թուխ այտերից խոշոր արտասուքներ էին հոսում։ Կարագիչը երեսը նրան դարձրեց և նկատեց, որ կինը լալիս էր։ Ես վախեցայ, որ մի գուցէ իշխանի շրթունքներից որևէ վիրաւորական խօսք թռչէր կնոջ հասցէին, բայց նա բոլորովին ուրիշ կերպ վարուեց։

— Մի վշտանայ, հոգեակս, ասաց իշխանը, վարդագոյն այտերդ կարող են թառամել։

Ես զարմացած նայում էի Կարագիչին։

— Կարո՞ղ ես դու արդեօք սիրել երբևիցէ մի ստրուկ, մի գերի, շարունակեց նա։ Ոչ, Մելիցա, դու կարող ես սիրել միայն ազատ մարդուն, ազատ, ինչպէս օդի մէջ սաւառնող արծիւը։ Արդեօք մենք պէտք է՞ հպատակուենք Սուլթանին... Համբերութիւնը, մի զրահ է, դա ճիշտ է. բայց եռանդը, գործելու ոյժն էլ՝ մի սուր։ Վտանգը մեզ չը պէտք է վախեցնի. արիութիւնը նրա տէրն է, իսկ երկչոտութիւնը՝ նրա ստրուկը...

Այդ միջոցին մեզ խանգարեցին։ Իշխանի խորհուրդներին կարօտ մարդիկ էին եկել։ Դա հասկանալի էր, որովհետև ամեն վայրկեան մեկնելու աղդանշանին էինք սպասում։

— Դու սիրում ես քո ամուսնուն, և լաւ ես անում, ասացի ես Մելիցային, երբ մենք մենակ մնացինք։

— Պարոն, պատասխանեց կինը, նա քարէ մարդ է. բայց քար կայ, որ կայծեր է արձակում և ոսկի է պարունակում իր մէջ։

Հէնց այդ վայրկեանին մենք նկատեցինք մեծ կրակներ չորս կողմից, նախ հեռուում, ապա աւելի և աւելի մօտիկ։

— Տեսնո՞ւմ ես լեռներում վառուող կրակները, ասաց Կարագիչ մեզ մօտենալով և վերցնելով գլխարկը,—դա զէնք վերցնելու նշան է։ Վաղը մենք պատերազմի ենք գնում։ Թող Աստուած պահպանի մեր հայրենիքը։

—

Հետեւեալ օրը, վաղ առաւօտեան, երբ լեռների կատարին ծագում էր արշալոյսը, պաղ ու ճերմակ, մենք ճանապարհ ընկանք։

Կարագիչը, շքեղ հագնված, կրում էր գօտու մէջ մի խանջալ և երկու ոսկեզօծ ատրճանակ, հրացանը ուսին և մի մեծ չիբուխ ձեռին։ Մելիցան շրջազգեստը վեր բարձրացրած, կարճ ժակէտով, որի թեւերը և կուրծքը զարդարուած էին աղուէսի մորթով հետեւում էր նրան, ծանրաբեռնուած՝ ինչպէս գրաստ, հրացանով, ռազմամթերքով և ուտելեղէնի պաշարով։

Երկու երեխաները պիտի տանը մնային. բայց հաղիւ մի քանի հարիւր քայլ էինք արել, երբ փոքրիկ աղջիկը Եանան վազելով մեզ հասաւ։ Նա լաց չէր լինում, այլ ջղաձգաբար կախուեց մեր ձեռքից և այդպիսով մեզ ուղեկցեց՝ հակառակ մեր բոլորի կամքին։

Մենք մտանք Հէրցեգովինա, և շուտով մի շարք կուիներից ու ընդհարումներից յետոյ, ստիպեցինք թիւրքերին յետ նահանջել, իսկ ինքներս անցանք դէպի Մոստար։

Բայց ահա յանկարծ Մուխտար փաշան իր ամբողջ զօրքով դարձաւ դէպի մեզ։ Ի մեծ զարմանս ամենքի, մեզ հրամայեցին յետ քաշուել, որովհետև ասում էին, մենք միայն մի քանի լեռնային թնդանօթ ունենք, մինչդեռ թիւրքերը՝ բազմաթիւ։ Ոմանք էլ ասում էին, որ

մեծ յանդգնութիւն կը լինէր մեր կողմից՝ կուել կանոնաւոր զօրքերի դէմ, մեծաքանակ և ազատ՝ իրանց շարժումների մէջ։ Մենք յետ քաշուեցինք, բայց կանոնաւոր նահանջով, միշտ կուելով և միշտ հալածուելով թիւրքերից։ Շուտով մօտեցանք մեր լեռներին, որոնք, կարծես, հեռուից ողջունում էին մեզ տխրագին։

— Լեռնցիները այնքան էլ գոհ չեն լինի, եթէ ըստիպուած լինեն միշտ իրանց թիկունքը թշնամուն դարձընել, թոյլ տուի ինձ նկատել հօսպօդարին։ Մինչ մենք պիտի շարունակենք նահանջը։ Զօրքի վհատելուց չէք վախենում։

— Դէհ, դէհ, շատ էլ մ՚ զարհուրէք, պատասխանեց իշխանը հեգնութեամբ։ Մի փոքր էլ համբերութիւն, և ես յուսով եմ, որ դուք գոհ կը լինէք։

Եւ յիրաւի։ Երբ Գացկոյի հովիտը հասանք, իշխանը մեզ կանգնեցրեց, և մենք պատրաստեցինք թիւրքերին ընդունելու։ Ես իսկոյն նկատեցի, որ բոլորի արևակէզ դէմքերին, կարծես, արեգակի ճաճանչներ փայլեցին։ Բոլորը լռիկ, բայց ուրախ սրտով միմեանց նայեցին։

Մեր փոքրիկ զօրագունդը մեծ մասամբ ցրուած էր բարձրութիւնների վրայ։ Ինձ թւում էր, թէ իշխանը կ՚բաւականանայ մի փոքրիկ ընդհարումով և անմիջապէս կը նետուի իր ժայռէ-բերդը։

Թիւրքերը մեծ թափով յարձակուեցին մեզ վրայ։ Երևում էր, որ նրանք զգում էին իրանց ոյժի գերազանցութիւնը, և լաւ գիտէին, որ մեզանից շատ բարձր են թէ թւով և թէ ռմբաձիգ զօրքի առաւելութիւններով։

Նրանց „Ալլահ, Ալլահ“, աղաղակները յաղթական շեշտ էին կրում։ Թնդանօթները փայլատակում

էին չորս կողմից և չարագուշակ կերպով որոտում լեռների մէջ պահուած մեր խմբերի գլխին, որոնք իրանց կողմից բուռն ու անընդհատ կրակ էին տեղում։ Եւ մինչ տղամարդիկ գնտակ էին արձակում, կանայք լցնում էին հրացանները։ Բայց աւա՜ղ, մերոնք ցածում, հովտի մէջ՝ տեղի էին տալիս։

— Այնտեղ մեր բանը շատ էլ աջող չէ, ասաց յանկարծ Կարագիչ, որի կողքին ես կկռել էի։ Եւ հէնց այն րոպէին, երբ վեր բարձրացայ, որ աւելի լաւ տեսնեմ, գնտակի մի հարուած ստացայ ուսիս։ Մի պառաւ կին լաց արիւնը և վէրքս կապեց։ Ես մնացի նստած մի սև քարի վրայ, հրացանս ծնկներիս։ Բոլոր վիրաւորները իրանց տեղն էին մնում։ Ես էլ նոյնն արի։

Ինձնից երկու քայլ հեռու, Մելիցան՝ ծնկաչոք իր ամուսնու հրացանն էր լցնում, մինչդեռ փոքրիկ Եանան՝ կատի ձագի նման թռչկոտալով մօտակայ աղբիւրից կըռուողների համար ջուր էր բերում, կամ վազում՝ գնտակների ետևից, որոնք ոստոստում էին մեր շուրջը։

Յանկարծ „Ալլահ, Ալլահ“ աղաղակները թնդացին մեր բանակի շուրջը։ Կարագիչ անմիջապէս ոտքի ելաւ։ Թիւրք թեթևազօրներն էին դրանք, որ մագլցում էին զառիվեր։ Մերոնք իսկոյն և եթ նետուեցին այն կողմը՝ նրանց ցած գլորելու համար։ Նոյն վայրկեանին Կարագիչ գետին տապալուեց, որպէս մի զանգուած։

— Ես վիրաւորուած եմ, ասաց նա սառնասիրտ կերպով, մինչդեռ Մելիցան, նրան գրկած՝ աղի արտասուք էր թափում։

— Ո՜հ, իմ հպարտ բազէ, գոչեց նա, անիծուած մուսուլմանի գնտակը քեզ էլ դիպաւ։ բայց դու պիտի ապրես։ Եթէ մեռնելու ես, ինձ էլ հետդ տար։

— Լաց մի լինի, հոգեակս, պատասխանեց իշխանը, իմ ոյժից բարձր է տեսնել քո արտասուքը:

Գնտակը սրունքին էր կպել: Վրայ հասաւ վիրաբոյժը, հանեց գնտակը և կապեց վէրքը: Սակայն անկարելի եղաւ համոզել Կարագիչին, որ հրաժարւի կուին մասնակցելուց. Իր կնոջ օգնութեամբ, կաղէկաղ նա ընտրեց մի յարմար դիրք և սկսեց գնտակներ թափել թիւրքերի վրայ: Վերջինները արագ-արագ մօտենում էին: Եւ որքան աւելի էին մօտենում նրանք, այնքան աւելի սուր ու թափանցող էին նրանց ճիչերը: Մեր շուրջը պաշտպանների մի փոքրիկ խումբ էր միայն մնում: Կարագիչը և Մելիցան գրեթէ մենակ իրանց դիրքում՝ շարունակում էին դիմադրել թշնամուն: Մուսուլմանների յաղթական աղաղակները երևի սոսկում էին ազդում գեղեցիկ կնոջը, որին կարծես վիճակւած էր թիւրքերի աւար դառնալ:

Սակայն Մելիցան հարեմի զարդ լինելու համար չէր ծնւած: Նա այն կանանցից չէր, որոնք մետաքսէ բարձերի մէջ ընկղմած և փափուկ մորթերով փաթաթւած՝ երազել միայն գիտեն: Ահա երեսն ի վայր պառկեց գետնին, փորսող տալով հասաւ մինչև հովտի շրթունքը, որի ետևը գլտնւում էինք մենք, զգուշութեամբ երկարացրեց վիզը, մինչ մենք շարունակում էինք հրացանաձգութիւնը, նայեց չորս կողմը պաղարիւնութեամբ՝ քննեց թշնամու դիրքն ու թիւը, որ արդէն պատրաստւում էր վերջին վճռական քայլն անելու և ապա հեռացաւ: Մի վայրկեան իր շուրջը զննելուց յետոյ, Մելիցան տեղահան արեց ժայռի մի մեծ կտոր և ապա առաջ հրելով մինչև հովտի շրթունքը, վայր գլորեց ··· արհամարհելով մեր և իր շուրջը սուլող գնտակները: Ատամները սեղմած, հայեացքը՝ մռայլ, Մելիցան ուժգին շարժումով գլորեց երկրորդ քարը: Ապա

երրորդը, չորրորդը: Նա գլորում էր ու գլորում: Տեսնողը կ'ասէր, որ այդ ծանր քարերը փետուրներ են նրա ձեռքի մէջ: Եւ գլորւող ամեն մի քար, խոչընդոտների հանդիպելով, ոստիւններ էր գործում և կայծակի ուժգին հարւածի նման շանթահարում դիմացը ընկնող թիւրքերին, որոնց ջախջախում էր ու գահավիժում դէպի անդունդը:

Երկու ուրիշ կանայք ևս վազել եկել էին հրացաններըը ձեռքին: Մի քանի գնտակ արձակելուց յետոյ, նրանք ևս սկսեցին քարեր գլորել իրար հետ մրցելով...:

Թիւրքերը կանգ առան....

Նրանք սկսեցին յետ քաշւել: Մի րոպէ Մելիցան ուզեց շունչ առնել: Ձեռքերը մէջքին՝ նա դիտում էր իր առաջացրած սոսկալի տարափի հետևանքը, երբ, որտեղից որտեղ, մի ֆէսաւոր գլուխ երևաց նրա ձախ կողմում, ժայռէ պատնէշի ետևից: Թիւրք թեթևաղօրներից մէկն էր, որ համարձակւէր, մեն-մինակ յանձն էր առել պտոյտ անել և յարձակում գործել՝ մեր փոքրիկ դիրքի ետևից: Մինչդեռ նա արիութեամբ անցնում էր պատնէշը, Մելիցան մի քանի քայլ յետ գնաց, կայծակի արագութեամբ խլեց իր ամուսնու գօտուց ատրճանակը և հաղիւ մի վայրկեան անցած՝ գետին փռեց, գրեթէ իր ոտքերի տակ յանդուգն զինուորին, առանց նրան միջոց տալու՝ նշան դնել..

Ցանկարծ հնչեց առաջ գնալու ազդանշանը: Եւ մի ակնթարթում ՍԼ Լեռան ամբողջ զօրաբանակը գահավիժեց ձիւնի հիւսերի պէս, դէպի հովտի խորքը: Շղթայազերծ մարդկանց մի հեղեղ էր դա, որ ողողում էր սարահարթերը, հոսում բոլոր պատահած շաւիղներով և գնում ցած՝ ուռցնելու ալիքը, որ բարձրանում էր վայրկեանէ վայրկեան, սպառնալով ջնջել թիւրքական բանակը: Տեսնողը կ'ասէր, թէ գայլերի վոհմակ է դա,

որ նետուում է թակարդը ընկած մի հսկայ որսի վրայ։ Լեռնցիները ցատկոտում էին ժայռից ժայռ, վագրների պէս ոստիւններ էին գործում ծերպերի վրայից, վայրենի ճիչեր արձակելով՝ ձեռներին ատրճանակ, խանջալները սեղմած ատամների արանքում։

Ահա այնտեղ, ցածում, նրանք մոլեգնօրէն գրոհ էին տալիս յանկարծակիի եկած թիւրքերի դէմ։ Հրացանները, ատրճանակները փայլատակում էին ու շառաչում, խանջալները բարձրանում էին և իջնում անդադար, ճեղքելով օդը՝ ինչպէս վառ բոցեր...

Կարադիշը հեռուից դիտում էր կռիւը, վշտահար, որ չի կարող մասնակցել։

— Աստուած իմ, Աստուած իմ, բացագանչում էր նա, ինչպէս նրանք լաւ են կռւում։ Նրանք առանց ինձ էլ կը յաղթեն։

Յանկարծ, առանց բառ արտասանելու՝ Մելիցան շալակեց իշխանին, և մի նեղ ու զառիվայր շաւղով տարաւ կուի ամենատաք տեղը, փոքրիկ Եանայի ընկերակցութեամբ, որը հեաւլով մի ծանր հրացան էր քաշ տալիս իր ետևից։

Սակայն կռիւն արդէն վերջանալու վրայ էր։ Հազիւ կէս ժամ անցած՝ լեռնցիները յաղթանակով դուրս եկան հսկայական ճակատամարտից։ Քառասուն հազար թիւրքեր սպանուած կամ գերի էին բռնուած. մեր ձեռքն էին ընկել շատ փաշաներ, բազմաթիւ դրօշակներով ու բոլոր թնդանօթներով։ Միայն Մուխտար փաշան՝ վիրաւորուած, մի քանի ձիաւոր հետևորդներով աջողեց փախչել և ապաստանել աւստրիական հողի վրայ։

Այդպէս անցաւ Գացկոյի ճակատամարտի օրը։ Որպիսի՜ օր, բայց և որպիսի երեկոյ՝ յաղթանակից յետոյ։ Այդ երեկոյ[illegible]ուելի լաւ սորվեցրեց ինձ՝ ըմբռնել Հոմերոսի և Իլիօնի հերոսներին, քան թէ ամենագիտնական մեկնութիւնները։

Գիշերը արդէն վրայ էր հասել և երկինքը աստեղազարդ պատանքի նման տարածուում էր արիւնաշաղախ մարտադաշտի վրայ, երբ ես հանդիպեցի Կարադիշին։ Ձնայած իր ծանր վէրքին՝ նա կարողացել էր ժամ առաջ տեղ հասնել և մասնակցել վերջնական ճակատամարտին։ Եւ նա կուել էր արիաբար։ Երբ ես տեսայ իշխանին, նա նստած էր իր կնոջ և երեխայի կողքին, գիւղական մի մեծ կաթսայի վրայ, որ դրուած էր գլխիվայր։ Նա ծխում էր իր չիբուխը և հրճուում իր ձեռքն ընկած հարուստ աւարով։ Նրա բաժին էր ընկել մի փաշայի գոյքի մեծ մասը, որի նա, հինգ լեռնցու աջակցութեամբ, գերի էր առել։

— Հիմա ինչ կ'ասես դու իմ կնոջ մասին, հարցրեց նա թեթև ժպիտով։

Առաջին անգամն էր, որ ես ժպիտ էի տեսնում այդ պղնձէ դէմքի վրայ։

— Ես կարծում եմ, որ նա մի հերոսի արժանաւոր կինն է, պատասխանեցի։

— Ես ուզում եմ, որ այսուհետև նա հագնուի ու զարդարուի որպէս մի սուլթանուհի, ասաց իշխանը ծանր ու խիստ տօնով։

Փաշայի թանգագին իրերի մէջ նա գտել էր մի ոսկէ շղթայ, որը իմ ներկայութեամբ, գցեց իր կնոջ վիզը, հանդիսաւոր ու լուրջ կերպարանքով։ Տեսնողը կ'ասէր, որ նա յարգանք է մատուցանում աքանչելի հերոսուհուն։ Ապա վերցրեց մի աստղանշան, որ հազարաւոր շողքեր էր արձակում և կապեց իր գեղեցիկ լծակցի սև, փարթամ մազերին։ Վերջապէս նա ծալատեց մի հրաշալի տաճկական մուշտակ, որի նմանները ինձ հիացում էին պատ-

ճառել Վիեննայի ցուցահանդէսին և առանց մի խօսք արտասանելու՝ հագցրեց իր կնոջը։

Մինչ այդ, Մելլեցան արտայայտում էր իր ներքին բերկրանքը ժպիտով միայն։ Այս անգամ նա կարմրեց և իր գեղեցիկ ու հպարտ գլուխը դրեց ամուսնու ղօրեղ կրծքին, երևի նրա համար, որ ծածկէ բուռն յուզմունքից ցայտած երջանկութեան արտասուքը։ Կարագիչը մի քանի վայրկեան պահեց կնոջը իր կրծքին սեղմած, յետոյ քնքշաբար ստիպեց նրան գլուխը բարձրացնել, փայփայելով ու ետ քաշելով նրա գեղեցիկ մազերը, որ թափուել էին պայծառ ճակատի վրայ։ Ապա, կրկին նստելով կաթսայի վրայ՝ սև լեռնցին սկսեց երգել կիսաձայն, մինչդեռ Մելլեցան լսում էր նրան հիացմունքով, նստած նրա ոտների մօտ...

Ահա տեսնում եմ մի փոքրիկ նաւակ,
Որ սլանում է կապոյտ լճակում։
Սիրտս բերկրութեամբ լցւում է համակ,
Երբ նրա արագ անցնելն եմ դիտում։

Երբ որ մի ահեղ ցնցող փոթորիկ
Նրան դէպի ափ ուզում է դցել
Թիերն է առնում մի ջահել աղջիկ
Եւ զարթ երգեր սկսում հնչեցնել։

Դէպ այս ափերը, Մելլեցա, շտապիր,
Եւ երբ գլուխդ դնես իմ կրծքին,
Կեանքը կը դառնայ անհոգ, բերկրալեր,
Սէրս քեզ միայն կ՚տամ, իմ անգին։

Ահա այստեղ է ողջ տիեզերքի
Ապահովագոյն փրկութեան կայան.
Խարիսխը սրտիս խորքը կ՚նետուի,
Իսկ դու կ՚կապւես շրթներիս վրան։

Շ Է Մ Բ Ի Ն

—

Ահա՛ տեսնում եմ ահագին մի շէնք։ Ճակատի նեղ դուռը կրընկաբաց։ Ներսը անթափանց մառախուղ, խաւար։ Բարձր շէմքի առջև կանգնած է մի աղջիկ... ռուս աղջիկ։

Սառնամանիք է շնչում այդ թանձր խաւարը և պաղ հոսանքի հետ՝ շէնքի խորքերից դալիս է մի ձայն, դանդաղ ու խուլ։

— Ո՞վ, դու, որ ուզում ես անցնել այս շէմքը, գիտե՞ս արդեօք, թէ ինչ է սպասում քեզ ներսը։

— Գիտեմ, պատասխանեց աղջիկը։

— Ցուրտ, քաղց, ծաղրի ատելութիւն, արհամարհանք, անպատուութիւն, բանտ, հիւանդութիւն, նոյն իսկ մահ։

— Գիտեմ։

— Առանձնացում, կատարեալ միայնակութիւն։

— Գիտեմ... Ես պատրաստ եմ։ Ես կը կրեմ բոլոր տառապանքները, հարւածների բոլոր տեսակները։

— Ոչ միայն թշնամիներից, այլ և ազգակա՞ններից, ընկերնե՞րից։

— Այո՛... և նրանցից։

— Լաւ։ Պատրա՞ստ ես արդեօք զոհողութեան։

— Այո։

— Անյիշատակ զոհողութեան։ Դու կ'ուզենայաս — և ոչ ոք... ոչ ոք նոյն իսկ չի իմանայ, թէ ում յիշատակը յարգէ։

— Ինձ պէտք չէ ոչ երախտագիտութիւն, ոչ ցաւակցութիւն։ Ինձ պէտք չէ համբաւ։

— Պատրաստ ես արդեօք ոճրագործութեան։

Աղջիկը ցած գցեց աչքերը։

— Ոճրագործութեան եւս պատրաստ եմ...

Զայնը անմիջապէս չշարունակեց իր հարցումները։

— Գիտէ՞ս արդեօք, վերսկսեց նա վերջապէս, որ դու կարող ես զղջալ, կորցնել հաւատդ դէպի այն, ինչին հաւատում ես այժմ, տեսնել՝ որ խաբուել ես, և իզուր զոհաբերել քո ջահել կեանքը։

— Գիտեմ և այդ, բայց և այնպէս ուզում եմ ներս մտնել։

— Մտի՛ր։

Աղջիկը անցաւ շէմքը — և նրա ետեւից իջաւ ծանր վարագոյրը։

„Անմի՛տ", կրճտաց մէկը դրսից։

„Անմա՛հ", լսուեց ի պատասխան մի այլ տեղից։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ԻՆ ԳԱՍ-ԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ZUUՌ-ԱՊՈ.ՍՍՀ
Ա. ՄԱ. Ա. Մ.ՇԻՐԱԿԱՆԻ
Ա. ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՄԱՍՆԱՅԻՆ

8